# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
## ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Մեծարգո՛ պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ եւ 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) օրենքի նախագիծը,

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Օրենքի նախագծի հիմնական զեկուցող՝ Գեւորգ Պապոյան:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ (021)**
**ԱՐՈՒՍՅԱԿ ՄԱՆԱՎԱԶՅԱՆ (036)**
**ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ (059)**

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքները, այդ թվում՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններով գործարքները, իրականացվում են մասնագիտացված անձանց միջոցով և ներդրումային ընկերությունների միջոցով, որոնք կարող են իրականացնել արտարժույթի առք ու վաճառք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և (կամ) դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:».

2) 8.1-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.1. Բանկերը և վարկային կազմակերպությունները սպառողական փոխառություններն ու վարկերը, բնակարանային հիպոտեկային կրեդիտները տրամադրում են միայն Հայաստանի Հանրապետության դրամով: Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (բացառությամբ ՀՀ ռեզիդենտ համավարկառու ունենալու դեպքի) բնակարանային հիպոտեկային կրեդիտները կարող են տրամադրվել նաև արտարժույթով:»:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո: Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների վրա:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Նախագծի մշակումը պայմանավորված է բնակարանային հիպոտեկային կրեդիտների արտարժույթով տրամադրումը արգելելու անհրաժեշտությամբ:

**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Վերջին տարիների գլոբալ զարգացումների համատեքստում աճել են անորոշությունները, ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների, արտարժույթի փոխարժեքի տատանողականությունը: Այս առումով արտարժութային տատանողականությունը արտարժութային վարկ ունեցող քաղաքացիների համար կարող է առաջացնել մեծ ռիսկեր: Խնդիրը հատկապես ցայտուն է բնակարանային հիպոտեկային կրեդիտների դեպքում, երբ վարկի ծավալը մեծ է և ժամկետայնությունը երկար (հետևաբար՝ փոխարժեքի փոփոխությունների հավանականությունը մեծ է): Օրինակ՝ արտարժութային վարկի գործողության առաջին եռամսյակում արտարժույթի 25%-ով արժևորման ենթադրական սցենարի դեպքում արտարժութային հիպոտեկային վարկի սպասարկման բեռը (դրամային արտահայտությամբ) սկզբնական բեռի համեմատ աճում է շուրջ 25%-ով, և նույնիսկ գերազանցում է համադրելի ժամկետով դրամային վարկի սպասարկման ընդհանուր բեռը: Պարտքի բեռի սպասարկման մասով դժվարությունները ավելի են սրվում, երբ հիպոտեկային վարկի ժամկետի ընթացքում (շուրջ 20 տարի) դիտարկվում է արտարժույթի արժևորման ևս մեկ ենթադրական շոկ:

Հետևաբար, վարկի գործողության ընթացքում փոխարժեքի անբարենպաստ շոկերը կարող են առաջացնել հաճախորդի արտարժութային հիպոտեկային վարկերի սպասարկման գծով բեռի աճ՝ հանգեցնելով վարկերի չվճարման և դրանից ածանցված այլ խնդիրների: Դրամային և արտարժութային հիպոտեկային վարկերի ռիսկայնության տարբերությունը առավել պատկերավոր ներկայացված է ստորև բերվող գծապատկերում:

*Գծապատկեր 1. Արտարժութային և դրամային հիպոտեկային վարկերում չաշխատող վարկերի կշիռը, %*




Քաղաքացիները, որպես կանոն, կարողություն և հնարավորություն չունեն կառավարել այդ ռիսկերը: Նրանք, հաճախ չունենալով արտարժութային եկամուտներ, ստանձնում են արտարժութային երկարաժամկետ պարտավորություններ, ինչի արդյունքում դառնում են զգայուն արտարժույթի փոխարժեքի անբարենպաստ փոփոխությունների նկատմամբ: Որոշ դեպքերում ռեզիդենտները կարող են ունենալ նաև արտարժույթային եկամուտներ (օրինակ՝ տրանսֆերտներ, արտասահմանյան կազմակերպությունների համար հեռահար ծառայությունների դիմաց վճարներ), սակայն դրանք, որպես կանոն, կայուն չեն, փաստաթղթավորված չեն, ենթակա են այլ շուկաներում արտարժույթի տատանողականության ռիսկերի:

Կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ փոխարժեքի տատանողականությունը հիպոտեկային կրեդիտների համար առաջացրել է մեծ խնդիրներ մի շարք երկրներում, մասնավորապես՝ Հունգարիայում, Բելառուսում, Վրաստանում, Ռուսաստանում և այլն: Այդ երկրներում ուղղակի կամ անուղղակի կերպով արգելվել են կամ սահմանափակվել են արտարժութային հիպոտեկային վարկերի տրամադրումը, մասնավորապես՝

- Բելառուսում արգելվել են ֆիզիկական անձանց արտարժութային վարկերի, այդ թվում՝ հիպոտեկային վարկերի տրամադրումը:
- Վրաստանում 2017թ. արգելվել են մինչև մոտ 37 հազ. ԱՄՆ դոլար (100,000 GEL) ծավալով վարկերի տրամադրումը արտարժույթով, ընդ որում 2019թ. այս սահմանափակումը խստացվել է՝ արգելքը տարածելով մինչև մոտ 75 հազ. ԱՄՆ դոլար (200,000 GEL) ծավալով վարկերի վրա:
- Հունգարիայում փոխարժեքի արժեզրկման հետևանքով վարկառուների բեռի կտրուկ աճի խնդիրները փորձել են մեղմել արտարժութային վարկերի մնացորդի վրա կիրառելով ֆիքսված փոխարժեքով փոխարկման մոտեցումներ, որի արդյունքում առաջացող մեծածավալ ծախսերի ամբողջ բեռը ընկել է բանկերի կամ պետության ուսերին, որը նույն է՝ անուղղակիորեն ամբողջ տնտեսության և հասարակության ուսերին: Միևնույն ժամանակ, ներկայումս արտարժութային

հիպոտեկային վարկերի տրամադրման մասով գործում են խիստ սահմանափակումներ:

**3. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Արտարժույթի փոխարժեքի տատանումների հետևանքով արտարժութային վարկերի սպասարկման գծով կրեդիտառուների խնդիրները և արտարժութային ռիսկերը զսպելու նպատակով առաջարկվում է փոփոխություն կատարել ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում՝ արգելելով բնակարանային հիպոտեկային կրեդիտները կրեդիտառուներին արտարժույթով տրամադրելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, նախատեսվում է, որ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (բացառությամբ ՀՀ ռեզիդենտ համավարկառու ունենալու դեպքի) բնակարանային հիպոտեկային կրեդիտները կարող են տրամադրվել նաև արտարժույթով:

««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով առաջարկվող փոփոխությունը տեխնիկական բնույթ է կրում:

**4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագիծը մշակվել է հեղինակների և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի համատեղ աշխատանքի արդյունքում:

**5. Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ կամրագրվի պետության հստակ արժութային քաղաքականությունն առ այն, որ բանկերին և վարկային կազմակերպություններին, ի թիվս սպառողական փոխառությունների ու վարկերի, արգելվում է տրամադրել արտարժույթով բնակարանային հիպոտեկային կրեդիտներ՝ բացառություն սահմանելով միայն ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար: Ներկայումս արտարժութային հիպոտեկային վարկերը չեն գերազանցում բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկերի 4%-ը, սակայն բնութագրվում են ընթացիկ բարձր աճի տեմպով, մասնավորապես՝ 2022թ. առաջին 6 ամսվա ընթացքում նոր տրամադրված արտարժութային հիպոտեկների ծավալը կազմել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում տրամադրված վարկերի ծավալի կրկնապատիկը:

Հաշվի առնելով արտարժութային վարկերի ցածր տեսակարար կշիռը՝ ներկա փուլում փոփոխության իրականացումը չի հանգեցնի ցնցումների և ֆինանսական միջնորդության տեսանկյունից տնտեսության վրա էական ազդեցություն չի ունենա և փոխարենը՝ կարող է զերծ պահել ապագայում հասարակության կողմից արտարժութային ռիսկի լայն ծավալով ստանձնելուց:

**6. Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը**

Ակտը նորմատիվ բնույթի է, քանի որ Նորմատիվ իրավական ակտի նախագիծը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների համաձայն մշակված գրավոր ակտ է և պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

**7. Օրենքների ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին**

««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**8. Օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը**

««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

**9. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

Նախագծի ընդունումը չի բխում ռազմավարական փաստաթղթերից:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 7. Հայաստանի Հանրապետությունում արտարժույթով գործարքների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտներն ու ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն առանց սահմանափակումների իրականացնելու արտարժույթի առք ու վաճառք՝ անմիջապես կամ տարաժամկետ վճարելու պայմանով, որոշակի ժամկետից հետո որոշակի գնով հետ գնելու կամ այլ արժույթով փոխանակելու իրավունքով կամ պարտականությամբ կամ որևէ այլ պայմանով:

2. ~~Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքները, այդ թվում՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններով գործարքները, իրականացվում են մասնագիտացված անձանց միջոցով:~~ 2. Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքները, այդ թվում՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններով գործարքները, իրականացվում են մասնագիտացված անձանց միջոցով և ներդրումային ընկերությունների միջոցով, որոնք կարող են իրականացնել արտարժույթի առք ու վաճառք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և (կամ) դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:–Մասնագիտացված անձանց կողմից իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի գործարքների փոխարժեքը և ծավալները սահմանում են մասնագիտացված անձինք:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում, բացառությամբ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանությունների, հյուպատոսական հիմնարկների, ընթացիկ արժութային գործարքների դիմաց վճարումները և կապիտալի շարժի ու ֆինանսական արժութային գործարքները կանխիկ և անկանխիկ իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ մասերում նշված դեպքերի:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում ընթացիկ արժութային գործարքների դիմաց անկանխիկ վճարումները և կապիտալի շարժի ու ֆինանսական արժութային անկանխիկ գործարքները կարող են իրականացվել նաև արտարժույթով՝

ա) իրավաբանական անձանց միջև.

բ) անհատ ձեռնարկատերերի միջև.

գ) սույն մասի «ա» և «բ» կետերում նշված սուբյեկտների միջև:

5. Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենքի 3-րդ հոդվածի 9-րդ կետի «դ» ենթակետում նշված ոչ առևտրային բնույթի գործարքները, բացառությամբ աշխատավարձի վճարումների, կարող են իրականացվել նաև արտարժույթով ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

5[1]. Հայաստանի Հանրապետության տարածքում փոխառությունները կարող են տրամադրվել նաև արտարժույթով, բացառությամբ սպառողական փոխառությունների, որոնք տրամադրվում են բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով:

5[2]. Անմաքս առևտրի խանութներում ապրանքների (գույքի) իրացման դիմաց վճարումները կարող են իրականացվել արտարժույթով:

6. Ռեզիդենտների միջև նվիրաբերության, նվիրատվության գործարքները, ինչպես նաև ժառանգությունը կարող են իրականացվել արտարժույթով:

7. Միջազգային կազմակերպությունները կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար գնանշումներն ու վճարումներն իրականացնել արտարժույթով՝ Կենտրոնական բանկի և կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով սահմանված դեպքերում և կարգով:

8. Բանկերը, վարկային կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպություններն իրավունք ունեն օրենքով իրենց վերապահված ֆինանսական, այդ թվում՝ ավանդային, վարկային գործառնություններն իրականացնելու արտարժույթով, բացառությամբ սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

8¹. ~~Բանկերը և վարկային կազմակերպությունները սպառողական փոխառություններն ու վարկերը տրամադրում են միայն Հայաստանի Հանրապետության դրամով:~~ Բանկերը և վարկային կազմակերպությունները սպառողական փոխառություններն ու վարկերը, բնակարանային հիպոտեկային կրեդիտները տրամադրում են միայն Հայաստանի Հանրապետության դրամով: Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (բացառությամբ ՀՀ ռեզիդենտ համավարկառու ունենալու դեպքի) բնակարանային հիպոտեկային կրեդիտները կարող են տրամադրվել նաև արտարժույթով:

9. Մասնագիտացված անձինք պարտավոր են իրենց հաճախորդներին Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ձևով և վավերապայմաններով տրամադրել արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթուղթ (անդորրագիր):

*(7-րդ հոդվածը փոփ., լրաց. 25.12.06 ՀՕ-39-Ն, լրաց. 13.11.07 ՀՕ-258-Ն)*